



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 24

ՇԱՀԱՐԱԹ

10 ՓԵՏՐՈՒԱՐ 1907

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱՌԱՌԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍՏՀԱՄԱՆԻ
Տարեկան 50 Ղրշ.	Տարեկան 54 Ղրշ.	Տարեկան 42 Ֆր.
Վեցամեայ 25 »	Վեցամեայ 27 »	Վեցամեայ 6 »

Զ Ե Ն Ի Թ

Իր ամէն մասանց մէջ կատարելապէս խնամուած միակ ժամացոյցը զոր կարելի ըլլայ յանձնարարել և երախտաւորել այն բացարձակ ճշտութեան համար՝ որ իր յատկանիշն է :

ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ ԲՍՐԻՉ 1900.

ԱՐՏԱՔՈՑ ՄՐՑՄԱՆ ՄԻՂԱՆ 1906,

Հանդերձ ժիւղի անդամակցութեամբ.

Թուրքիոյ և բովանդակ Արեւելքի համար միակ ներկայացուցիչը

Գ. ՍԱՐԳԻՍՕՅ Ե Ի ԸՆԿ

Մեծ մթերանոց ամէն տեսակ ժամացոյցներու, չղթաներու և զոհարեղէններու :

Կ. Պոլիս, Պադի-գաբու, Օոզգի-Պաֆ (Էօսկր-հփհնի) վաճառատան դիմաց Թիւ 16,


ԱՐՏՈՆԱՏԻՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(آ. آمدوریان) شرکت صتیبه مطبیهی — باب عالی جاده سنده نومرو ۵۷

ՏՊԱԳՐՈՒԹ ԻԻՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Այի ճաշքսի Թիւ 52

Հատոր 40 փապա



Ձեռնի, nsfի ու nsfի եւ ձեռնի]
 Լիանգամայն մեքենաներ
 կը գտնուին

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ՝
 Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր. Ընկերութեան վաճառատանց մէջ՝

Սինկերի
 Ընկերութեան
 Վաճառատանց
 մէջ

- | | |
|---------|--|
| ԲԵՐՍ. | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, Թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ . |
| ԿՍ.ԼԱԹա | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը . |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ . |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թիւ 13 . |
| ՍԵՐԻՏԱՐ | 2արշը Պօյու, Թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն
 Մասնագիտէր գաւառներու բոլոր ֆաբրիկաներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թիւ 343 եւ 343 կրկին, Տիւղօղլուի տունը:

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է՝ լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝
ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻՔ ԿԱԶՄ. ՓԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւ լագործութեամբ, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԴԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 24

ՇԱՐԱՐ

10 ՓԵՏՐՈՒԱՐ 1907



ՅԱԻԷՏ ՈՂԲԱՑԵԱԼ

ՎՍԵՄ. ԳՐԻԳՈՐ ԽԱՆ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

Բ Օ Թ

Կորուսը մեծ է եւ ցար՝ ընդհանուր :

Մեր համայնքը անդամանելի է անմխիթար կորուսը կ'ողբայ այսօր յանձին՝

ՎՍԵՄԱՇՈՒՔ

ԳՐԻԳՈՐ ԽԱՆ ՇԱՄՏԱՆՃԵԱՆԻ

մին այն դեմքերէն՝ որոնք բարեբարի նեմարիս անուն մը կը ձգեն իրենց ետին :

Լացերու եւ հեծկյաններու սխրասարսուռ արձագանգը որ կը լսուի չորս դիէն, Հանգուցելոյն աղբասներն են, իրմ պաշտպանուածները, խնամուածները, որոնց սրտերը կը բզֆտուին ու չունին իրենք մխիթարութիւն՝ իրենց խոցեալ սրտերուն համար, ու չեն ուզեր հաւատալ սա մեծ նեմարսութեան քե՛ մեծ բարեբարը՝ ՎՍԵՄԱՇՈՒՔ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ ԽԱՆ ոչ եւս է :

Վսեմ Հանգուցելոյն անձնական եւ բնական կեանքին վրայօք ո՛ր է քովասանք սկար պիտի մնայ, ու ո՛ր է քնարար գրիչ չպիտի կրնայ արժանաւոր դրուատիքը հիւսել այն օրինակելի ու սիպար կենցաղին մասին՝ զոր վարած է ողբացեալը :

Կրօնք, ուսում, բարեկրթութիւն, սեր ու խիղճ ի մի ձուլուած էին այն անձնաւորութեան մէջ՝ զոր աշխարհ ողջոյն կ'ողբայ այսօր: Համեստութիւնը՝ իրեն սկզբունք, սերը՝ բնոյթ, եւ բարեգործութիւնը իրեն մենաշնորհն էին կարծես :

Վանառականական ասպարեզին մէջ ալ կը մարի մին այն լուսաւոյ ջահերէն, որոնք առաջնորդի դերն ունին՝ դեպի ուղղամտութիւն, յարասելութիւն :

Վսեմ. Շամսանեան հանի առեւտրական կեանքը կենդանի օրինակն է պատուաւոր գործունեութեան, բազմամեայ յարասել աշխատութեան եւ արդար վարձատրութեան :

Ընտանեկան կեանքէն խօսելով՝ պէտք է ըսել քե՛, յաւեօ ողբացեալ Վսեմ. Գրիգոր Խան, այն միակ հայրն էր, որուն միակ իտեալն ըլլայ զաւակաց կրթութիւնը, երջանկութիւնը եւ մարդկութեան օգտակար հանդիսանալու վեհ ձգտումը :

Երանի՛, բիւր երանի իրեն որ կրցաւ զոհաւորութեամբ իր փափաքներուն, ու տեսնել իրականացումը իր բաղձանքներուն, յանձին չորս հարազատներուն, որոնց անգուսպ արցունքները կ'ողբան իր կորուստը :

Վսեմ. Հանգուցեալը հանչողները միայն կրնան ստուգել եւ ըսել քե՛ հակառակ Մամուլին օտերով գրած դրուատիքին, դեռ կը մնայ բարեմասնութիւններու քաղուն շարք մը՝ պատկերացնող ու մարմնացնող Անոր առաքինի կենցաղը, ազնիւ բնոյթն ու կարօտին ստուգի՛ւ կարեկից իր սերը :

Այս անմխիթար եւ անմոռաց սուգը ողբացող Ազնիւ Գերդասանին եւ պարագաներուն հետ կը խառնուին նաեւ այն դառն արցունքները՝ զորս կը բափեն այսօր այն բոլոր աղբաս ու տնակ կարօտեալները, որոնց կ'օգնէր ու կը նպաստէր ինքը լուռ՝ անտուք, ճիւրապէս սփոփելով զանոնք. մինչ հիմա՛ . . .

Երանի անոնց՝ որոնց ետեւէն աղբասը կուլայ, եւ բիւր երանի անոնց՝ որոնց ետեւէն աշխարհ մը կուլայ, որպէս սուգը՝

ՎՍԵՄ. ԳՐԻԳՈՐ ԽԱՆ ՇԱՄՏԱՆՃԵԱՆԻ :

ՅՈՒՂԱՐԿԱՌՈՐՈՒԹԻՒՆԸ

Կիրակի ժամը ուրիշ սեղի ունեցաւ յուղարկաւորութեան ժողով արարողութիւնը Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին, ժամուոյն հանդիսաւորութեամբ :

Տանաւր համակ յուսողով կը հեծէր այն բնակեալ հոծ բազմութեամբ, որ եկած էր իր վերջին յարգանք մատուցանել, ողբացեալ Վսեմ. Խանին, թիւով չորս հինգ հազար :

Ամեն ազգի հասրնսիր բազմութեան մեջէն աչքի կը զարնէին՝ Բարձր. Միքայ Բիգա Տանիւ Խան, դեսպանական մարմինը, ինչպէս նաեւ Կ. Պոլսոյ վաճառականական բարձր դասը, ակաւաւոր անձնաւորութիւններ, օտարազգի նշանաւոր դէմքեր եւ Մամուլն ամբողջ, որոնք եկած էին անձամբ յայտնել իրենց սիրելի բարեկամին վերջին յարգանք մը :

Դագաղը՝ համակ ընկուզին ու պերճօրէն զարդարուն, կը կանգնէր Մահաբեմին վերեւ՝ տանարին մեջտեղը, ծածկուած բիրազան պսակներով, զորս զրկած էին Հանգուցելոյն ազգականներն եւ յոգնաթիւ բարեկամներ :

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը կը նախագահէր մեռելական արարողութեանց, իր շուրջը ունենալով վեց բարձրաստիճան եպիսկոպոսներ, տասներկու վարդապետներ, քառասունէ աւելի քահանաներ եւ բազմաթիւ դպիրներ :

Նախագահ Սրբազանը, բեմ ելլալով իր յատուկ պերճախօսութեամբը խօսեցաւ դամբանականը, բնաբան առնելով « Գորհուրդ բարեաց զգուշացնէ զեւ, միտք սուրբ պահեսցնէ զեզ » խօսքը, եւ վեր առաւ Հանգուցելոյն օրինակելի բարեմասնութիւններն ու իրար կենցաղը, միաբարութիւն հայցեց վեսաբեկ այրի Տիկնոջը, զաւակներուն եւ պարագաներուն :

Յաւատք եկեղեցական արարողութեանց, դագաղը առաջնորդուեցաւ եկեղեցւոյն բակը, ու հոն վերջին աղօթքներն ալ կատարուելէ վերջ, նոյն ժամ դագաղը դրուեցաւ քառաձի առաջնակարգ կառքի մը մէջ, — որուն կը հետեւէին հարիւրի չափ շահօտներ, — եւ տարուեցաւ Շիշի, մարմինը ամփոփուելու համար Ընտանիքին յատուկ դամբարանին մէջ :

Մեռելական կառքը երբ Բերայի շիտակ նամբէն կ'անցնէր, արդէն հանրապետներու եւ կառքերու երթեւեկը դադրած էր պահ մը. ա'յնքան խուռն էր բազմութիւնը :

Դպիրներու ներդաւանակ երգեցողութիւնք տարունակուեցան մինչեւ Ս. Յարութիւն եկեղեցին, ուր վերջին աղօթքները կատարուեցան եւ ուր յուղարկաւորները իրենց ցաւակցութիւնները յայտնեցին՝ Միհրան, Յեսու Շամսանեան էֆենտիներու, Հրանտ Խանի, Զարեհ եւ Նուպար Շամսանեան հաւներու, Աղեքսանդր էֆ. Փանոսեանի եւ Շամսանեան հաստատութեան Տնօրէն՝ Ազն. Մկրտիչ էֆենտի Նազմանեանի եւ ազնիւ Պատշտեմութեան :

Խմբագրութիւնս խորապէս զգածուած այս անմխիթար կորստեան առթիւ, իր խորին վշակցութիւնները կը փութայ յայտնել՝ Ազն. Այրի Տիկին Պէտրոս Շամսանեանի, Ազն. Միհրան եւ Յեսու էֆենտիներուն, Հրանտ Խանի, Զարեհ եւ Նուպար Շամսանեան հաւներու, Ազն. Աղեքսանդր էֆենտի Փանոսեանի, եւ Ազն. Մկրտիչ էֆենտի Նազմանեանի, ինչպէս նաեւ Շամսանեանի եւ Փանոսեանի գերդաստանին ու համայն պարագայից :

ՁԱԽՈՐԴ ԺԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ

Սիրուն, սիրուն որքան կարելի է երևա-
կայել, գեղեցիկ որքան ներելի չէ ըլլալ, Հե-
լենուհի, ինչ որ բանի մը չի վնասեր, — ընդ-
հակառակը — մանկամարդ՝ կնասէր ծերու-
նի մը թուքերը վաղցնելու չափ, և ասոնց
ամէնուն վրայ որբեւայրի:

Ո՞վ է ըսեր թէ առանց փուշի վարդ չը-
լար: Հապա աղուո՞ր որբեւայրիները:

Ահաւասիկ այն յատկութիւնները որոնց-
մով օժտուած էր Տիամանդինա:

Գիտեմ, երբ այս պատմութիւնն կարդաք,
միաբերան պիտի գոչէք ամէնքդ ալ.

— Օխ ըլլա, ինչո՞ւ անոնց հետ կ'իյնաս:
Բայց, հոգիներդ կը սիրէք, ձեր խրատները
ձեզի պահեցէք և Հելլենուհիները ինծի տուէք:

Այսպէս, ո՛չ դուք կը կորսնցնէք և ոչ ես:
Հիմա, կրնամ սկսիլ, այնպէս չէ՞: Օր
մը կանխաւ որոշուած ժամադրութեան մը
արդեամբ և այն խոհեմութեամբ որ սիրա-
հարներու յատուկ է և չէ, Տիամանդինայի
դուռը զարկի մեղմիւ:

Տաք օր մըն էր, այն եգիպտական տա-
քերէն, առանց որոնց ո՛չ արմաւները համ
պիտի ունենային և ոչ սիրահարութիւնները՝
Փարաւոններու այդ երկրին մէջ:

Կէս օրը երեք ժամ անցած էր, և այդ
պահուն ոչ ոք կրնար ըլլալ տունը բացի
իրմէ, սակայն դուռը չէր բացուեր:

Հաւատեալութիւնը սիրահարներու էն մեծ
դրամագլուխն է: Ինծի այնպէս կուգար որ
Տիամանդինա կ'ուշանար դուռը բանալու,
սա պարզ պատճառին համար որ չէր կրնար
գալ առանց հայելիին հարցնելու թէ ի՞նչպէս
էր արդուզարդը:

Վերջապէս բացուեցաւ դուռը:

Անակնկալներուն էն անդուծը: Հայրն է
դէմն կայնողը:

Երբ քսան երկու տարեկան կնոջ մը առջ,
ալեխառն մօրուքով հաստաբաղուկ հայր մը
դիմացնիդ կը կանգնի, օ՛հ, կ'երզնուի որ
առկէ անախորժ բան չի կայ աշխարհիս վրայ,
և այդ պարագային միտքերնուդ կուգայ
վերջի մեծ օրը, ուր ճիշդ այս անակնկալնե-
րու բացատրութիւնը տալու համար պիտի

կանչուիք: Հայրեր կան, ամուսիններու պէս,
որք գլուխնուն գալիքը շուտ կը կռահեն և
կը գուշակեն այդպէս անսովոր ժամու մը
արուած այցելութեան մը չարժաոյիթը, և
առանց զիս ներս հրամցնելու, ինչ որ սովո-
րութիւնն էր, և ձայնով մը զոր մեծ դերա-
սանները կը գործածեն Օթէլլօի դերին մէջ:

— Ի՞նչ կ'ուզէիք, հարցուց աճապարա-
նօք:

Վարպետ տուտուլի քով գացող մանկան
մը պէս՝

— Մամա ըսելու ըրաւ, ըսի, եթէ Տի-
ամանդինան սեւ դերձան ունի թող քիչ մը
տայ, պէտք ունի:

Ես ինքզինքէս ամէցայ, այդքան ապուշ
ըլլալ չէի սպասեր ... ինձմէ:

— Կայնէ՛, ըսաւ:

Կայնէ՛: Ես կեանքէս տաւը տարի կու-
տայի որ գնա՛ ըսէր:

— Իրաւ, հազիւ երկու վայրկեան սպա-
սեցի, բայց ես գիտեմ ի՞նչ վիճակի մէջ:

— Ահաւասիկ, ըսաւ, և ձեռքիս մէջ
դրաւ, ուղած գոյնիս ճիշդ հակառակը, ճեր-
մակ դերձանի կտոր մը:

— Բայց մամա սեւ կ'ուզէր կոր ... ը-
սելու չ'մտայ:

— Գնա՛, ըսաւ, եթէ ճերմակը մամայիդ
չի ծառայեր, քու գործդ կը տեսնայ:

Ու այս ըսած տեսնը այնպէս մը նայե-
ցաւ երեսս ի վեր, որ տարադոյս չունեցայ
թէ ամէն բան հասկցած էր:


Եթէ ամէն գործ ասանկ կը տեսնուի, վա՛յ
մեզի:

Վերջապէս սա ըսեմ թէ տարիներով տու-
ներնին չը գացի այլ եւս, սա պարզ պատ-
ճառին համար որ աւելի կը սիրեմ ոսկորներս
քան որ եւ իցէ կին մը:

Հիմակ կ'ուզէ՞ք օգտուիլ զլիտուս եկածէն,
սա խրատս մի մոռնաք:

Երբոր կին մը տեսնելու կ'երթաք, և փո-
խանակ իրեն, հայրը կամ ամուսինը ձեզ
կ'ընդունի, Աստուծոյ սիրուն, թէ՛ սեւ դեր-
ձան և թէ ճերմակ ուզեցէք միանգամայն:

Յ. ԱԼՓԻԱՐ



ՄԻՔԱՅԷԼ ԶԱՓՐԱՍՏ

Վերջապէս Զափրաստ չի կրնալով դիմադրել կրած նիւթական ու բարոյական — խումբին բառերով — անկումին՝ մեռաւ անցեալ չարթու Սկիւտարի բնակարանին մէջ, չըրջապատուած իր ընտանիքէն ու հինգ անչափահաս զաւակներէն:

Շիտակը ցաւալի էր տեսնել այդ անուանի կատակերգուին վերջին տարիներուն մէջ թշուառ ու մոռցուած վիճակը, երբ աչքի առջեւ կուսննանք անոր անցեալ փայլուն կեանքը:

Եթէ զբաղինք քիչ մը թատրոնի 10-20 տարի առաջուան կեանքով, հոն պիտի գտնենք Զափրաստ իբրեւ օրուան մարդը:

Վարդուկեանի, Աղամեանի, Մնակեանի խումբերուն մէջ Զափրաստ ամենէն աւելի փնտռուած ու յարգուած դերասանն էր, և այդ Օսմանեան մեծ թատերախումբերը կատարեալ չէին համարուէր՝ եթէ երբէք Զափրաստ չի դանուէր հոն: Ինք կրցած էր շատ լաւ ըմբռնել իր արուեստին բոլոր պահանջունները, և այսպէսով կրցաւ արդարացնել իր վրայ ճշմարիտ ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԻ մակդիրը:

Բան մը՝ որ դժբախտաբար չի վխտար մեր մէջ:

Թողլով պահ մը հին անցեալը, որ գրեթէ մեր ժամանակակիցներուն անծանօթ է, անյնինք անոր մէկ քանի տարի առաջուան կեանքին, երբ ինք առաջնորդութիւնը կը վարէր Զաւեշտախումբի մը: Ինչ, միթէ ժողովուրդը քիչ արուեստ նշմարեց հոն, անոր ծափերը ու «պռավօ»ները որո՞ւ համար էին, ու արդեօք Զափրաստի ստանձնած դերերուն մէջ անբնականութիւն մը տեսնուեցա՞ւ:

Զափրաստի դերերուն մէջ բացարձակապէս բնականութիւն մը կ'երեւար: Երբեմն բեմ կ'ելլեր առանց նոյն խակ իր դերը սովորելու, ու դարձեալ ներկաներէն գնահատուածի ու բուն ծափերու կ'արժանանար:

Իր դէմքին չարժուածները, քաղուածքին նրբութիւնը, ու ճաթած ձայնը բաւական էին ահագին քրքիչներ հանել թատերասրահին մէջ:

Օր մը Կօնէ Լէվի ըսած է «այս մարդը իր ունեցած այսչափ յատկութեանց հետ եթէ քիչ մ'ալ եւրոպական կրթութիւն առած ըլլար, շատ նշանաւոր դէմք մը եղած պիտի ըլլար աշխարհիս մէջ»:

Զատրաստի տարիքը թէեւ հազիւ 59 կար, սակայն իր յոգնած դէմքը ու նիւթապէս կրած չարչարանքները զգալապէս ծերացուցած էին զինքը, այնպէս որ տարիքէն անսեղեակներ՝ 70ը անցած կը կարծէին:

Անդրանիկ զաւկին անողոք մահուան վերայ ալ աւելի ինկաւ դժբախտ հայրը:

Զափրաստ ծնած է 1848ին Պուքրէշի մէջ, ուր՝ ծնած է նաեւ մեր ողբացեալ նշանաւոր կատակերգակը Ռշտունին:

Զափրաստ իր ապրուստը առաջուց ի վեր կատարելապէս բեմէն չի կրնալ հողալուն համար՝ եղած է նաեւ ատամնաբոյժ, կեղծամ պատրաստող և սլորի ուսուցիչ:

18 տարեկանին արդէն շատ լաւ կերպով իւրացուցած էր սլորը, ու սկսած էր դասախօսել վարժարաններու ու մասնաւոր տուններու մէջ:

Հեղինակած է կարգ մը զաւեշտներ, որոնք մինչեւ այսօր կը ներկայացուին մեծ յաջողութեամբ:

Յօրինած ունի մէկ քանի տնամներ ալ, որոնց մէջ « Զղջումը » տեղական կեանքէ տոնուած թատերադրութիւնը, առաջին տեղը կը գրաւէ :

Չափրաստ՝ Պէնկլեանի, Մնակեանի հետ դաւաճական պոռոյտներ ալ կատարած է, և ուր որ գացած՝ հոն քաղցր յիշատակներ ու անուշ տպաւորութիւններ թողած է :

Վերջին մէկ քանի տարիներուն մէջ սակայն տնամաքի խումբը զրկած էր զինքը այդ պատիւէն, միայն թէ ասկէ երեք տարի առաջ, երբ Մնակեան խումբը անհամաձայնութեան մը պատճառաւ երկուքի բաժնուած էր, այն ատեն ստիպուած Մնակեան՝ իր հետը տարաւ Չափրաստը :

Իրեն ըսածին նայելով՝ ամէն անգամ խումբը կը խոստանայ եղեր զինքը միասին առնել, առանց սակայն մեկնած օրը լուր մ'իսկ տալու, որով Չափրաստ կրկին կ'սկսէր ատամնաբուժութեան :

Ամէն մարդ, նոյն իսկ դերասաններ յարգանք կը վարուէին այդ անուանի ու վեհագի կատակերգուին հանդէպ, ինչ որ արժանի էր արդէն :

Որչափ լաւ քրիստոնեայ ու առաքինի հայր, նոյնչափ ալ աղքատասէր եղած է :

Անցեալ տարի Կաղանդի գիշերը, Աղքատախնամի անդամները առանց գիտնալու կը զարնին Չափրաստի տան դուռը, յանուն աղքատաց նոր տարին շնորհաւորելու ու նուէր մը ստանալու համար : Պզտիկ տղան դուռը կը բանայ ու այդ մարդոց անակնկալ այցելութենէն շուարած՝ չիտակ վեր հօրը կը վազէ : Անդամները կ'զգան գործուած սխալը ու երբ կը պատրաստուին մեկնիլ՝ յանկարծ տղան վար կուգայ ու երկուքի չիտակ վեր հօրը կը վազէ : Անդամները կ'զգան գործուած սխալը ու երբ կը պատրաստուին մեկնիլ՝ յանկարծ տղան վար կուգայ ու երկուքի չիտակ վեր հօրը կը վազէ : Անդամները կ'զգան գործուած սխալը ու երբ կը պատրաստուին մեկնիլ՝ յանկարծ տղան վար կուգայ ու երկուքի չիտակ վեր հօրը կը վազէ :

Չափրաստէն ասկէ աւելի մեծ բարեգործութիւն մը կ'սպասուէր միթէ : Խեղճ մարդ, թերեւս այդ չորս դրուշով երկու օր կրնար ամբողջ տունը ապրեցնել, սակայն տեղի նախամիծար համարած է այդ գումարը տալ աղքատաց :

Չափրաստի տխուր վիճակը մեղի անբնական չերեւիր անշուշտ, քանի որ լաւ համոզուած ենք թէ՝ արուեստի ծառայող ան-

ձինք գրեթէ բոլորն ալ այս տեսակ ապագայ մը ունենալ կը խոստանան, իրենցմէ է թէ Բնութենէն, չենք գիտեր :

Այնչափ ատեն բեմին համար կեանքը մանչեղ Չափրաստը, վերջերս խախտէս աղքատ ու ողորմելի դարձած էր :

Քառասուն երկար տարիներ շարունակ մեղի խնդացուցած էր, ժողովուրդն ալ սակայն զինքը ուրախացուց գոնէ մասամբ իր տուած նուէրներովը :

Դժուար բան չ'է մեղի համար երեւակայիլ թէ ինչ տխուր կացութեան մէջ կը գտնուի դժբախտ մը, ուրիշ՝ պատու մը չոր հաց կ'ակնկալեն վեց անչափահաս զաւակներ, որոնց ամէնքն ալ տակաւին գործելու անկարող :

Սրբազան Պատրիարք Հայրը, որ միշտ պաշտպան կանգնած է այդ տեսակ արժանի թշուառներուն, հաճած էր կոնդակ մը տալ ձեռքը, որպէս զի հանրութեան գթութեանը զիմէ :

Տեսնէիք անգամ մը, ինչ վիճակի կ'ենթարկուէր, այդ թուղթը ձեռքը՝ վաճառատունէ վաճառատուն պըտըտած ատենը :

Օր մը եկաւ ու խնդրեց որ միասին երթամ, որովհետեւ ըսաւ, կը խայնիմ կոր, միշտիկ չ'սկսի կրնամ ընել, ինծի անանկ կուգայ կոր որ՝ զիս սկսի վաճառել :

Նոյն օրը եօթը ոսկոյ չափ գումար մը անցաւ ձեռքը, այդ դրամով որոշած էինք ատամնաբուժութեան վերաբերեալ գործիքներ գնել, որպէս զի ալ գործի սկսի ու կարենայ օրական քանի մը զրուշ վասակիլ :

Հետեւեալ օրը կրկին զիս տեսնելուն. « Էվլա՛տ, ըսաւ, տիւն ագչամ իքի օգկա էթ կէօթիւրտիւմ, պիւր կէլ տէ էվտէքի ուրախութիւնը կէօզտէն կէչիւր, դաւալը չօճուգարըմըն քէմիքլէրինտէ իլիք գալմամըն ըտը, պիւրսին քի էվիմիդ աիւլիւն էվինէ տէօնտիւ » :

Խեղճ արուեստագէտ :

Անկեղծ ըլլալու համար ըսենք թէ՝ այս քանի մը ամսուան մէջ Մնակեան խումբը պէտք եղածէն աւելի օգնեց Չափրաստին, ու չի թողուց որ խեղճ գէթ վերջի օրերուն մէջ թշուառութեան մէջ մնայ :

Նոյն իսկ մեռած գիշերը Մնակեան Որդին իրեն արդար իրաւունքը զրկած էր:

Ասոնք աղէկ, սակայն Չափրաստի փափաքն էր կրկին երեւնալ բեմին վրայ, որ այնչափ կը սիրէր:

Պարապ խօսք է խումբին ըսածը թէ՛ ա՜նկա տկարացած ու անկարող էր:

Մտրդ մը որ չարաթը երկու երեք անգամ հետիոտն Սկիւտարէն մինչեւ Գատըզիւղ կ'երթայ օրականը առնելու, չենք կարծեր որ չի կարենայ պղտիկ ռօլ մը ներկայացնել:

Արդէն Չափրաստին բեմին վրայ երեւնալը հանդիսատեսներուն բաւական էր խնդալու համար:

Ամառուան չրջանին Մնակեան խումբը Սկիւտար «Գամկիւղարդ Տիկինը» կը ներկայացնէր, որուն մէջ Ալէն Կօտանի գերը ի վաղուց անտի Չափրաստին մանաշնորհ եղած էր: Այդ գիշեր Չափրաստին հետ թատրոնին մէկ անկիւնը նստած էի, և երբ այդ դերը կատարող դերասարը բեմ եկաւ, խեղճ արուեստագէտին աչքերը սկսան լեցուիլ ու պղտիկ մը լացաւ:

Այնչափ կը սիրէր այդ դերը:

Մնակեան խումբին Չափրաստին հանգէպ վերջերս ցուցուցած ջերմ համակրանքը յիշելով ըսենք նաեւ թէ՛ մտադիր էր մէկ երկու շաբաթ առաջ, նոյն իսկ իր կենդանութեանը նպաստ մը տալ Սուրբ Խաչի Լսարանին մէջ:

Հիմայ թող ներուի ինձ հարցունել թէ՛ ամառը այդ շնորհը ինչո՞ւ զլացաւ խումբը: Միթէ Մնակեան և ուրիշ դերասաններ աւելի՞ խեղճ էին Չափրաստին:

Աստուածածնին երկուշաբթի օրը Չափրաստը տեսայ, որ իրեն համար նպաստ մը տալու կտրծիքը յայտնեց, հաւանեցանք ու խումբին հետ համաձայնիլը ինք ստանձնեց, ու տոմսակներով հոգն ալ ես:

Յաջորդ օրը պիտի երթար տեսնուելու, ու իրիկունը ժամադիր եղած էինք զրօսավայր մը: Ժամանակին զացի, քիչ յետոյ տեսայ Չափրաստի մուտքը, որ կը յառաջանար ակտաւորի մը, վասոյժի մը պէս:

Չի յարձարեցանք ըսաւ, որովհետեւ 40 ոսկի կուզեն կոր:

Քառասո՛ւն ոսկի . . . :

Եթէ թատրոնը ամբողջ լեցուէր հազիւ 50

ոսկի հասոյթ մը կ'ըլլար, որուն 40ը խումբը պիտի առնէր, քանի մը ոսկի ալ բնականաբար ծախք կ'ըլլար, ուրեմն ի՞նչ պիտի մընար խեղճ Չափրաստին, յոգնութիւն մը միայն:

Եւ ո՞վ մաքէն չ'էր անցունէր թէ՛ նոյն իսկ ներկայացումին գիշերը տեղատարափ անձրեւ մ'ալ չպիտի առնէր Չափրաստին բողբոջէն:

Ասոնք ըսելով սակայն չենք ուղեր խումբը վշտացնել, անոնց նիւթականն ալ մեծ բան մը չ'էր, բայց վերջապէս . . . :

Մնակեան խումբին դերասանները գրեթէ բոլորն ալ վերջին յարգանք մը մատուցին ողբացեալ կատակերգուն, ներկայ դստուելով յուզարկաւորութեանը, մանաւանդ հոգալով պէտք եղած ծախքերը, միանգամայն խոստանալով այրեացեալ տիկնոջ իրենց օժանդակութիւնը՝ մինչեւ որ մեծ տղան կահնայ տունը ապրեցնել:

Ասիկա ծափահարելի է շիտակը:

Մաղթելի է որ խումբը կարող ըլլայ կատարել իր խոստումը, ու տայ իր արդէն մըտադրած նպաստը:

Չափրաստի մահով Թրքահայ թատրոնը կը կորսնցնէ իր ամենէն նշանաւոր արուեստագետներէն մէկն ալ:

Մահեր կան՝ որոնք կեանքեր կ'արժեն, խեղճ Չափրաստինն ալ գոնէ իրեն համար այդպէս ըլլալուն տարակոյս մի ունենաք:

Հիմայ, հանգչեցուր քու յոգնած գլուխդ ու սիրելի Չափրաստ և մի մտածեր քու զաւակացդ վրայ, ինչու որ քու արուեստակիցներդ քեզի այնչափ սիրող ժողովրդահան աջակցութեամբ պիտի օգնեն անոնց:

Նշանակութիւն չ'ունի այլեւս Քինի այն խօսքը թէ «Դերասանութիւնը օգին մէջ գծուած պատկեր մ'է, նկարուած պահուն իսկ անհետացող»:

ՆԵՐՇԱՊՈՒՆ

Շնորհակալութեան բաժին մը կը պարտինք յայտնել «Արեւելք» օրաթերթին, որ անկողմնակալ զգացմամբ հաճած էր մեզ հասցնել լուսանկարը Հանգուցեալ Վսեմ Գրիգոր Խանի, որով կարելի եղաւ մեզ յատկապէս պատրաստել տալ նոր քիթի մը ծառի զինկոկոնա՞ Մ. Իւթիւճեան էֆէնտի:

ՍՕՐՄԱԿԻՐԻՆ ՍՈՒԱՌԷՆ

[ՃԱԹԻԿ-ՃԱԹԻԿ ՅՕԴՈՒԱԾ]

— Ինձի տա ֆիստան մը չպիտի չինէիր, վազ անցայ, մի չիներ տէ չօճուխներուն սիրտը տեղը բեր ... Կ'ըսէ Տիկինը սէտիրին քէօշէն ծունկ փոխելով, մինչ ամուսինը՝ օրհասականի մը պէս գլուխը պատին, աչքերը կէս մը գոց մտիկ կ'ընէր իր կէսին սպառնական ու հրամայական խօսուածքը, որուն գլուխ ծուկ հարկադրուած էր խեղճը՝ յանուն ալաֆուանկային, հակառակ սանթիմ մը դրամօժիտ չառնելուն:

— Հալսը զըվըռ զըվըռ աղջիկ կը կարգեն կոր նէ, բիւթիւն տա պիչիմը էյլէնձէնէրուն երեսէն է ... տունիդ դուռները առա սըրա պիտի լսնաս քի բաղդ ըսուածն ալ բացուի ...

— Կ'ընիկ, որ սահաթ է մտիկ կ'ընեմ կոր, չի խօսիմ ըսի չեղաւ, հիմա առ սուվառէ է ինչ խառնախօսի է տալու ըլլանք նէ եկողները կատուի պէս տամը պիտի հանես... եկողները ո՛ւր պիտի նստին ... Կ'ըսէ մարդուկը վախու երազէ մը արթնցածի պէս թրթռուն չեչտով ու ձեւով մը:

— Խլտաին ցուրան է մահանա ... Եւ կողները մէյ մէկ կէօջ առապասի չէին ետ ... առ օտան մէկ, դուրսի սուֆան երկուք, դիմացի ետթախ օտապին՝ երեք, քովի աչքըվըսը չորս, ելւքէրն ալ կը պարպում, դուռները կը հանեմ, չորս չորս իսկէրմի ալ հոն կ'առնէ, տահա վէրի ետթախ օտապիները կան, վարի պակը, օտուկուխին դուրսի դին ...

— Հախ ունիս կ'ընիկ, տահան կայ քի մոռցար, դուրսի քիւմէսը, քէօմիւրլիւկը, օճախին մէջը, թաւան առապին, քիրէմիտներուն վրան ... քա ինչ կ'ըսես կոր լսելքիդ եկաւ, եկողները ձմեռուան սօժի են քի քէօշէ պուճախ պիտի թըխես ...

— Դուն առ բաներուն մի խառնուիր, ատանկ կուստօները կ'ընկան գիտնալու բան է, դուն սատէ իքուամները կ'ընդ նայէ ...

— Բանի համալցու բան կելլայ սանքի թահմինով ...

— Կէնէ մի պաշլայեր Սերոբիկ աղա, երեք եթկին աղջիկներու տէր ես եղեր նէ, ամէն բանը պիտի աչկդ առնես քի սըրա վարաի երթան, չէնէ առանկ առբաճի խումբիսի պէս նստիմ տէ դուռս չալեն ըսես նէ, եանի արունը կը մոտաս մախարմներուն ... Կ'ըսէ տիկինը սենեակին դրանը նայելով, ուրկէ ներս կը մանար նոյն պահուն մեծ աղջիկը՝ Պիստոսը:

— Սո՛ւս ... գոցէ հիմա առ լախըռադն, կ'ըսէ հայրը ի տես աղջկան, ու կակսի սիկաս ուր պլորել:

— Ինչո՞ւ պիտի պահեմ ... չօդ չէյ, թող երթան անոնք ալ գիտնան ըլլալիքը, հէմ ալ թախը մը ալաֆուանկայ բաները Պիստոսս գիտէ ...

— Կ'ընիկ դուն թոցուցեր ես ... ասանկ սուառէներով գործ չի լմնար, ետքէն տիլէ տէսթան կ'ըլլանք, աչքիներուն պէս խախվէներուն քէօշէնէրը կը խօրաթուինք ...

— Հէլպէթ խըյախ կուստօրու էյլէնձէ ըլլայ նէ բերներուն վար չեն ձգեր ... հէլէ ուզածիս պէս ճիւմպիւշ մը խուռմիշ ընեմ տէ նայէ քի ինսոր պիտի խօրաթուինք...

— Սա չիտակ ըսիր կ'ընիկ, երդում կ'ընեմ քի պիտի խօրաթուինք, հէմ ալ առամ աղըլը պիտի խօրաթուինք:

— Հիմա դուն ըսէ նայինք Պիստոսս, դուն կուստօրու ես, հէմ ալ կը հասկնաս ... սա ներսի չիֆթ ֆիթիլի լամպան վառենք տէ, ծառքի խառքէն ալ հիւճրէն դնենք նէ լուսերու պանեօի պէս չըլլա՞ր օտան ...

— Ինչ կ'ըսես մամա, խօսք կ'առնէ կուստօրու Պիստոսը, բան գիտցողի յոխորտանօք, անանկ չորս հատ մը վառելու է ...

— Էյ անանկ է նէ, հօրդ օտապին լամպան ալ կը վառենք, քովի բերտաբէյնց օռտէկ պաշի կաղերն ալ փոխ կ'առնենք ...

— Ձիյաւում ալ, բայց վարի բակն ալ լուս մը կ'ուղէ ...

— Ծառքի ֆէնէնը կտխենք նէ չըլլա՞ր, մէջը կէս մոմով ...

— Ի՞նչ կ'ըսես ամա, ըլլալիք բան չէ ...

— Ձէնէ կիրակոս աղբօրը կ'ըսենք, ժամուն չի ֆթէ մոմու ֆէնէններէն մէկ հատ մը բերել կուտանք, սա ուր է պաղի Թաղական աղաները կը տանին կը բերեն նէ ...

— Ատ հոգ չէ ...

— Պարէ եղաւ ըլլալիք, մոռթուճիներուն ալ խապար խրկեցէք, ճերմակ թիբէ էջափէններնին դնեն դան դուռը կենան սըրա վարաի ... կ'ըսէ Սերովբիկ աղան:

— Տէր ողորմոյ ըսէ, ննջեցեալ էր ասիկայ ...

— Հապա ժամուն ֆէնէնը կուգայ նէ մոռթուճին ինչու չիգայ ...

— Բեղի չըսի՞ քի սուս պիտի ըլլաս ատէյի ...

— Բէք աղէկ, սուս ըլլամ ամա, եկողը Սէրովբիկին տունը պիտի գայ, խարիպ տէրտէրին խուցը չէ ...

— Օռթերս այախլանմիշ կ'ըլլան կոր ... սո՛ւս եղիր ըսի քեզի ... խօսք կ'առնէ տիկինը, աչքերը չափէն աւելի բայած, խօսք կը հասկնաս դուն ...

— Բէք աղէկ ճանրմ ... ըրէք եղէք, ուղածնուդ պէս տառցուցէք, ամա ետքէն խախկութին մը ելլայ նէ ճուղապը դուք տուէք ...

— Հիմա ըսենք քի մէկ Թառաֆէն խալապալըսը կոխեց տէ իքոամի վախթ եկաւ, ո՞վ պիտի թէփսին բերէ քա Պիստոս ...

— Երկու կառսօն պէտք է մամաս ...

— Ի՞նչ ...

— Երկու մարդ պէտք է որ հրաւիրեալներուն պէտք եղածը բերին տանին ...

— Սա խույրուխու խըղմէթճիներ կան նէ անոնցմէ՞:

— Հապա՞, կանոնը ան է ...

— Կեցիր քա Պիստոս, ես աժանճա ույտուրմիշ կընեմ, դպրոցին տնտեսը իլէն մեր սիրքէճին, կէնճ աղաք են, Սերովբիկ աղային ալ սէթրինները ետեւուն թօխուլամիշ կընեմ խույրուխու իր լայ կ'երթայ, հիմա ատոնց ալ էլէլ էվէլօք փարսայ չի տանք ...

— Ի՞նչ կ'ըսես մամաս, մառլառուկութիւն է ...

— Բէք աղէկ, հայտէ ատ ալ պէտք է ըլլուի, իքոամները ըսէ նայինք, թուղթ մը առ տէ գրէ քի վաղը հայրիկիդ տանք, մէկ Թառաֆէն թող առնէ կըրէ ...

— Լաւ, ըսելով, օրիորդը թուղթ մասիտ կ'առնէ ու կսկսի գրել, չորս քաշ Զոռիկ կլասէ ...

— Ի՞նչ պիչիմ բան է ատիկայ ... տուէնէն չէնք կրնար ույտուրմիշ ընենք ...

— Անկարելի է մամաս, եւրոպական է, պտուղներ են շաքարի մէջ սառած ...

— Քա վա՛խ վա՛խ վա՛խ, նայէ՞, գիտնայինք նէ ամառը արմուտին ծառին տակը հովէն թափածները սէտիբի պէս էր, կը ժողվէի կ'եփէի ... է՛յ, տահա՞ ...

— Ֆօնտան, կէնէ երկու օխա մը պէտք է, քօնեակին հետ ...

— Քա աղջիկս, բէք բարակը մ'երթար, ատ ի՞նչ է քի ... Փիլիկ ախթէրէն չէնք կրնար ատոր տեղը պաշխա մէղէ մը ույտուրմիշ ընէք ...

— Ի՞նչ կ'ըսես մամա, աս ըսածս անպատճառ է ...

Անկիւնը մունջ նստող և սուտ քուն ձեւ լացնող Սերովբիկ աղան կսկսի ուժով ուժով խուսիլ ձեւացնել:

— Մէկ երկու տեսակ ալ չօքօլա պէտք է, բայց օխա ու կէսը կողտէ կարծեմ, կը շարունակէ օրիորդը, որ իր քսան և հինգ տարինները երեկոյթներու մէջ անցուցած էր թէյդէին ողջութեանը, ու հիմա զրկուած, որովհետեւ մայրը տունէն դուրս չէր ելլար բնաւ: Եւ ահա ասոր համար է որ քիչ շատ բանէ հասկըցողի պէս կը խօսէր:

— Քա ետուրում, ֆարաղա ատ ալ պալկաս ըլլայ, եկողները փոր կշտացնելու չէն ես ... ես վէրի քիլէրը հերուէն մնացած լէպլէպի շէքէրի ունիմ խալանօղ մը ...

— Դուն ինծի մտիկ ըրէ մամաս, առաւօտեան դէմ ալ բըթի ֆուռ պէտք է որ հանենք, երկու քաշ ալ ատկէ տունելու է ...

— Իշտէ ատ չի հասկցայ, հայեվար ի՞նչ կըսեն ատոր ...

— Պղտիկ ֆուռուն ըսել է ամա, ուրիշ բան է ...

— Էյ ատ խօլայ է, հասկցայ, սիրտեր-
նին չի մարի տէյի սիմիթ... մեր Եօրկին
կ'ապսպրենք, պէլքի հինգ հատը քառսուն
փարայ կը շինէ տաք տաք կը բերէ...

— Ձէ ճանրմ, չաքարեղէն է ըսածս,
պղտիկ պղտիկ բանդէսբանիայի պէս տէ վը-
քան զարդաշաքարներով...

Սերովբիկ աղային խռկալը այնքան կ'ա-
ւելնայ, ի լուր այս տունը քրքրող ծախքե-
րուն որ, նստած տեղէն երեք անգամ կը
թոթռուի ու կ'սկսի պոռալ,

— Սաթմամ... իւշ եիւզ լիբատան աշա-
ղա վէրմէմ... զօռ ըլան տէյիլ ա'...

— Քա սուս նայինք աղջիկ սայըլամիշ
կ'ընէ կոր..., Սերովբիկ աղա'...

— Հը'...

— Ի՞նչ է ան, ի՞նչ կը ծախես կոր քու-
նիդ մէջը, ելիր տեղդ պառկէ...

— Չօգ չէ՛յ, կ'ըսէ մարդուկը, աչքերը
կէս մը բացած, նստած տուններուս երկու
հարուր սէքսէն ոսկի կուտան կոր, ես երեք
հարուր կուզեմ կոր:

— Էյ ծախելու միտք ունի՞ս քի...

— Ձէ, հիշ միտք չունէի ամա... նայե-
ցայ քի Պիստոսին ծառքի թուղթին սօման
խանութիւս սէրմիյէն անցաւ նէ, տունը թէլ-
լալին տուի...

— Աման տուն ալ իս տող մի հաներ...
եւ ալ գիտցայ քի վրադ տաքութիւն կայ տէ
սայըլամիշ կ'ընես կոր տէյի..., գրէ քա
Պիստոս, օյինի է ելեր հարըդ...

— Օյինի ետքէն պիտի ելլանք, աս բան
մը չէ, ան իրինկունը, հոս գան լեցուին տէ,
զօմիսիոն խանին պէս ալտըմ վէրտիմ խա-
ղան նէ, օյինը ան վախիթը սէյիր ըրէ տուն:

— Աղէ՛կ եա իշտէ, մենք ալ ախսուա-
թայի համար աստար փարայէն կ'ելլանք կոր,
բերանս բանալ մի տար ճահիլին քովը...

— Մայրի՛կ, առտուն գէ՛մ սուբէ չի՞-
պիտի հանենք...

— Սուբէն ինչ է աղջիկս, ի՞նչ գիտնամ,
ի՞նչ քի լայըլս է նէ պիտի ըլլայ կատարի...

— Սանքի քիչ մը ուտելիք չտկենք, սե-
ղան մը տանք, չորպա, հաւ, չէրէզ, անու-
շեղէն, պտուղ...

— Էյ եավրում, խելքս չհասնիր ամա,
կիտնուլս չատ տաղտաղալը կ'ըլլայ, չէ նէ

փարային համար հոգս չէ... ատոր ալ կըս-
տուլութախըմ կ'ուզէ...

— Ձէ նէ, չայ մը կամ չօքօլա մը հա-
նենք, երկու երեք տեսակ պիսկուիով...

— Էյ ատ կ'ըլլայ, Հոռօփիկին երկը թա-
պախճի է, խատէխները քիրայով կ'առնենք
կ'ըլլայ կ'երթայ...

— Հիմա մնաց քանսերու համար պէտք
եղած կարգադրութիւնը... չորս տուփ ֆօն-
ֆէքքի, չորս տուզինա սեռքանքէն...

— Քօնեակին հիտ պիտի հանենք ատոնք:

— Ձէ մամաս... ատոնք պղտիկ պղտիկ
գունաւոր թուղթեր են և կամ երկայն քօռ-
տէլաի պէս որ քատուլին իրարու կը նիտ-
ուին...

— Պարէ եղաւ ըլլալիք, վաղը երթամ
տունը սիկուռթան դնեմ... կ'ըսէ ամուսինը
բարկութենէն կաս կապուտ կտրած...

— Պերանըդ խեր պաց Սերովբիկ աղա,
ինչո՞ւ, զահէր կրակի պիտի տանք...

— Քա հաւի կլոխ, ատ քօռտէլաները
նստած ատենին ելլայ լամպաներուն զայ
տէ տէվրիմիշ ըլլա՞յ նէ...

— Ծանրմ չըսինք քի փոխ պիտի առ-
նենք լամպաները տէյի...

— Խաչոր սընըրներս ճիրիթ կը խաղան
կոր, էօլիւմիս պատճառ պիտի ըլլաս Սերով-
բիկ աղա, ծանրդ կտրէ, հէ՛մ ալ կ'ուզես նէ
գնայ վերը պառկէ ալթըխ...

— Քա ես հոս եմ տէ ուզածսիդ կ'ընէք
կոր, երթամ պառկիմ տէ իս մայիս չըռողի
պէս մոխրի վրայ նստեցունէք, հա՞, ա-
նանկ կ'ուզէք կոր...

— Առաջուրնէ թող մտմտայիր տէ երեք
հատը մէկէն չի շարէիր հարսնիքի մօմի պէս,
աղջիկ զաւակ ունեցողը ամէն բանին խաթ-
լանմիշ պիտի ըլլայ:

— Անէքի ծառքովդ տրածի պէս գիտես
կոր քի, ասանկ էյլէնէ մը ընես նէ երեքը
մէկէն պիտի կարգես, Տէր կարապետին ըսէ,
ան ալ ան գիշերը հոս գտնուի, մէկ մասրա-
ֆով քչենք երթայ...

— Անոր անտեղն ալ երկնաւորը գիտէ,
ի՞նչ գիտես պէլքի ատ ալ կ'ըլլայ, հէլէ իմ
ուզածիս պէս չտկեմ չտկուտեմ, հազուեցնեմ,
երեսնին ալ քիչ մը քսեմ, կէօքսէրնին նիմ-

տէն պանամ, թեւերնին վեր սթմտեմ, մաշ
զերնին ձգեմ ...

— Առնեմ Դալաթիայի պաշտօնները տա-
նիմ, նայէ ինտոր միւշտէրի կը կտնամ ...
պիտի ըսես ...

— Սո՛ւս, պերանդ պունուի, ինտոր ալ
կը զուրցես ... կըսէ տիկինը ինքզինքէն ե-
լած, տահա իմ աղջիկներս, պախըռն էր-
քէքը պիլէն իրարմէ չեն կրնար զատուլ ...

— Էյ հախ ունիս, իրաւ էս ... քա ա-
տիկայ տառը տարի թուապուղան կեցող, հինգ
տարի ալ խալայծի չըրախութիւն ընողը
պիլէ զոռ կը հասկնայ, կէօյա թառափ կը-
նես կոր ...

— Ինծի նայէ սոն ճուղապս առ է, ա-
մնկական պանը պիտի ընեմ ըլլամ, էկէր
դուն փարայէն կը փախչիս կոր նէ հորին
չուվանը վարընճաղ կը տանիմ ըռէհին կը
դնեմ փարա կը վերցունեմ, ամա Աստուած
ալ վճուտդ կը վերցունէ ետքը ...

— Հասկցայ, հիմա համոզուեցայ քի
բուրթիկնիդ խըզմիշ է եղեր ... ըրէք, ու-
զածնուդ պէս խարճեցէք, իշտէ ձեզի փա-
րայ, իշտէ ձեզի մաղաղայիս բանլինքը,
իշտէ ձեզի տունիս հէօճէթը, էվէլնայ նէ
մէղառիս վրայ քար մը դրէք հոգուս հա-
մար, չէվէլնայ նէ փեսերուդ ըսէ քի պար-
տական չի պառկցունեն, հէմ ալ վրաս դը-
նելիք քարերուդ վրայ սա պէյիթը կուզեմ
քի զրուի՝

Էնէյս չէ, ոչ ալ խըռքը կամ դողը,
Անխեթ կինս է կենն կենն իս հոս խորողը .

ԼԻԼԱ


[Շարունակելի]

Յաջորդ թիւով պիտի նկարագրենք սըր-
ուած սուառեմ, իր էն տաք մանրամասնու-
թիւններով, դոր այժմէն կը յանձնարարենք
կարգալ ջերմապէս :



ՎԱՐՔԵՐ ՈՒ ԲԱՐՔԵՐ

ԻՆՉՊԵՍ ԿԵՐՆԻՒՆ . . .



Ճաշկերոյթը վերջացած էր բոլորովին զըւ-
արթ տպաւորութեան մը տակ :

Արտասովոր գործունէութիւն մը կը տի-
րէր այն իրիկուն տան մէջ, անօրինակ, բա-
ցառիկ ոգեւորութիւն մը կարծես, որ ո՛չ
նուազ զարմանքի մէջ ձգած էր ընտանիքին
անդամները : Եւ ի՛րապէս ալ զարմանալու
բան էր, որովհետեւ Գրիգոր աղան անանկ
դիւրին խնդացող, շէնչող, զուարթերեւ
մարդերէն չէ՛ր : Երեւակայեցէ՛ք մէկը, խո-
ժու դէմքով, խիստ և անկարեկիր դիմա-
դիծերով, որ պարզապէս պզգանք կ'աղդէ
ո՛ր և է ուշադիր դիտողի մը, և ա՛յն ատեն
ամենէ՛ն աւելի դիւրին է աչքի առջիւ ու-
նենալ ճիշդ վերոյիշեալ Գրիգոր աղային լի-
ակատար պատկերը :

Բաւական տարիներ կար որ ամուսնացած
էր ինք, և անկէ ի վեր, անկէ առաջ իսկ
արդէն խոժոռութիւնը, խտասրտութիւնը
ամէն բանէ աւելի փայփայած, գգուած տ-
ւաքնութիւնն էր իրեն համար : Եւ աւելի
յարմար պիտի ըլլար ըսել թէ՛ սխալ հասկըց-
ուած, անգիտակից տեսակ մը լրջութիւն էր
իրենը, որուն ո՛չ ոք կարող եղած էր խելք
հասցնել, ինչպէս կ'ըսէին շատեր՝ երբ առի-
թը ներկայանար ինքնին :

Այն իրիկուն սակայն, գործերը բոլորովին
տարբեր կերպարանք մը առած էին տան մէջ :
Ի՞նչ էր եղած, անակնկալ բա՛խտ մը ժպտած
էր արդեօք Գրիգոր աղային : Ո՛չ ոք կրնար
ո՛ր և է մեկնութիւն մը տալ այս մասին, ինչ-
պէս նաեւ կրկին ո՛չ ոք կրնար հասկնալ
Գրիգոր աղային անակնկալ, անակնուելի
զուարթութեան սկզբնապատճառը : Հրա՛շք
մըն էր եղածը, է՛հ, ո՛վ գիտէ :

Ի՞նչ որ ալ ըլլար սակայն, Գրիգոր աղա-
յին դէմքը կը ճառագայթէր այն դիշեր : Կու-
ղէր խօսիլ, խնդալ, և իսկապէս յայտնի,
բռնաղքօսիկ ճիգեր ալ կ'ընէր իր այդ մը-
տադրութիւնը անխափան առաջ քշելու հա-
մար :

Հիմա ամէնքն ալ հաւաքուած էին վեր-
սրահը, և տենդոս խօսակցութիւն մը, մը-

տերիմ tète à tête մը ծայր տուած էր արդէն իրենց միջեւ, երբ յանկարծ Գրիգոր աղան կարծես ա'լ աւելի առաջ տանելու համար ոգեւորութիւնը:

— Ա՛ն նայիմ սա՛ ղազեքան, Զապէ՛լ, ընդմիջեց, և իր կողմնակի զրպանէն թերթ մը հանելով կարկառեց իր աղջկան՝ որ բարձրաձայն կարդայ:

— Հիմա ատոր ժամանակը գտար, մա՛րդ Աստուծոյ, առարկեց տիկինը, թո՛ղ տուր որ քիչ մը սանկ խօսինք:

— Ի՛նչ կ'ըլլայ ո՛ր, պատասխանեց ամուսինը, նորէն կրնանք խօսիլ, կամ թէ՛ եթէ կ'ուզեա՛ քիչ մըն ալ վաղը կը շարունակենք, հիմա թո՛ղ կարդայ ի՛ր քիչ մըն ալ մե՛նք աշխարհէն խապար ունենանք...

— Իրա՛ւ որ, թօհաֆ բաներ կը խօսիս կոր այս իրիկուն, ղազեքան ալ ի՛նչ է որ...

Խօսակցութիւնը տակաւին հաղիւ վերջ դաժ՝ Զապէլ կ'սկսի օրուան դէպքերէն հետաքրքրաշարժ դրուագ մը կարդալ բարձրաձայն, որ կ'ունկնդրուի երկու ամուսիններու լարուած ուշադրութեան մէջտեղ: Ընթերցումը կ'աւարտի և ծայր կուտայ վիճաբանութիւնը: Պարզ անձնասպանութիւն մըն է եղածը, և երկու ամուսիններ փոխադարձ հետեւութիւններ կը հանեն անկէ, իրենք իրենց համար բաղդատութեան զանազան եղբեր որոնելով:

— Է՛, շարունակէ՛ նայինք, կը հրամայէ հայրիկը կրկին, ա'լ ուրիշ բան չ'կայ կարգացուելիք...

Աղջիկը թերթը կը դարձնէ արագ շարժումներով, կը զննէ իւրաքանչիւր տողը, մանրակրկիտօրէն կը դիտէ սիւնակներու զանազան ու զարմանազան բովանդակութիւնը՝ և վերջապէս մէկ մըն ալ կանգ առնելով տողի մը առջեւ, կ'սկսի կարդալ:

— Ա. էֆ. Ս***եան, Հիւանդանոցիս նուիրեց 20 շրշ. փոխան ծաղկեպսակի:

— Հէ՛, ի՛նչ ըսիր, կը բացագանչէ Գրիգոր աղա՝ չլմորած, ատիկա՞ ո՛վ է, սա՛ մեր գիտցած Ս***եանը, իրաւ որ ըսելիք չ'կայ...

— Տեսա՛ր հիմա, կը ձայնէ Տիկինն ալ իր կարգին, մենք մնացինք միմեկ, ամէնքն ալ գտեր են ինքզինքնին ցուցքներու եօլը...

— Ինքզինքը ցուցքները ի՛նչ պիտի ըլլայ

որ դուն ալ, աշխարհքը վրանին կը խնդայնեն կոր չ'ըսե՛ս սըւոր...

— Իրաւո՛ւնք ունիս, բայց այս խնդիրը ուրիշ է, ջուր չի՛ վերցնիր, մե՛նք ալ բան մը ընելու ենք հիմա, պզտիկ խրդ մը գո՛ւէ...

— Ես չե՛մ գիտեր, կարողութենէս վեր բաներու հետ գործ չ'ունիմ:

— Օ՛ք, դուն ալ երկայն ըրիր, կարողութիւնը ի՛նչ է որ, մենք ալ բան մը կուտանք, սանկ քիչ մը շատկէկ, և այն ատեն ճակատաբաց կրնանք հաստատել, ապացուցանել թէ՛ այդ տեսակ բաներ միայն ուրիշներուն դործը չէ՛, մե՛նք ալ կրնանք ընել, մե՛նք ալ կարող ենք մեր ունեցածէն (°) բաժին հանել բարենպատակ հաստատութիւններու համար, ղազեքան ալ կը գրուի, լմենցաւ զնաց...

Գրիգոր աղան սակայն չի՛ կրնար ինքն ալ իր կարգին վայրկեանակա՛ն որոշում մը տալ, կը տատամսի պահ մը, շփոթելու ձեւեր կ'առնէ, բայց անկարող ալ է իր տիկնոջ կամքին առջեւ հաստատ մնալ, և վերջապէս տեղի տալով,

— Հիմա՞ ընենք թէ ուրիշ ատեն, ի՛նչ կ'ըսես դուն...

— Հապա՛, կը հարցնե՛ս տակաւին, և ժամանակ ալ անցընելու չի՛գար, վաղը իսկ ընելու կատարելու է, արժանապատուութեան խնդիր է աս...

Համաձայնութիւնը հիմա երկուստեք իր կատարելութեան ղէնթիթը հասած էր այլևս, կը մնար միայն գործադրել զայն, բան մը որուն համար Գրիգոր աղա իր կարգին չի՛ դեղեւցաւ և փութաց անյապաղ: Եւ արդէն ինք բացարձակապէս դրական մարդ էր, և պարզապէս աւելորդ պիտի ըլլար այս առթիւ ի վեր հանել իր ձեռնհասութիւնը գործերու կարգադրութեան մէջ:

Հաղիւ մէկ երկու օր ետք, թերթերը կը հրատարակէին հետեւեալը.

«Ազն. Գրիգոր էֆ. Ս***եան, փոխան ծաղկեպսակի մէկ սովի նուիրեց Հիւանդանոցիս»:

Գրիգոր աղային ռէքլամը իր յաջողութեան ճամբուն մէջն էր ինքնին, և այն հրատարակութեան օրն իսկ ճշմարտապէս արժանի էր դիտելու իր դէմքը և ա՛յն յոխորտեսակ մը ուռուցիկ քաղուածքը, որ կարծես ըսել կ'ուզէր իր դէմը առաջին անգամ ելլողին.

— Ի՜նչ ատա՛նկ կը ցուցնեն ինքզինքը...

ՊԱՐՈՅՐ

ԳՐԱԿԱՆ ԱՍՊԱՐԷԶ ԻՋՆԵԼՍ

Ես՝ տէր անհամար կարկոտանքերով և անթիւ պատուհանիկներով կօշիկի մը, լէքէյա՝ ծաղիկներով զարդարուն հագուստի մը, իւզի գործարան (fabrique) բակ կ'ուզեմ սխալ չը հասկնալ) ժաքէթի օձիքի մը, ու աւել մազերու, որոնց մէջ երբեմն կենդանիներ կը վազվզեն, և վերջապէս այս ամէն մեղքիս վրայ գաւազանի մը, պատիւ ունիմ ծանուցանել թէ՝ այսօր գրական ասպարէզը կ'իշնեմ արարթման օձիքիս եօթն ու կէս երրորդ յարկէն, (կէս երրորդ յարկը լուացարան) խարխուլ սանդուխէ մը, որուն հաղիւ կէսը հասած կը կտորի և ես ինքզինքս «Հանրագիտակ»ի խմբագրատան առջեւ կը գտնամ, ուրկէ խմբագիրները զիս ներս կ'առնեն: Հաղիւ շունչս առած էի, երբ գրաշարներէն մէկը պոռաց,

— Ծօ՛, Միքայէ՛լ, հինգ հացով հինգ զէյթին առ:

Ի լուր այս խօսքին՝ ես արմացած, զարմացած, յանկարծ կը վախնամ, մտածելով որ կրնար այս մարդը զիս ալ ուտել, բայց քանի մը վայրկեան կ'անցնի և ինչ տեսնեմ, Միքայէլ կը վերադառնար ձեռքը քիչ մը հաց և ձիթապտուղով, ու այն ատեն կը հասկնամ թէ ատ ալ գրաշարային խօսակերպ մըն է եղեր պարզապէս:

Խմբագիրներէն մէկը զիս տեսնելով ըսաւ.

— Պարոն, արդեօք կրնամ ձեր անունը և ինչ գործով զբաղիլը հասկնալ:

— Ինչո՞ւ չէ կը պատասխանեմ, ձեր խոնարհ աղախինը (ծառայ չըսելու համար) Տօլստօյ-տէրէյի բարձունքը կը բնակի, խոտերով չըջապատուած չքեղ վիլլայի մը մէջ և քստան երկու տարեկան է, մեծ հօրս հայրը Նինի-ցային մեծ հայրը կ'ըլլայ և մեծ հայրս թոռս օլլուի հօրեղբայրը:

— Բայց մենք ատոնց պէտք չ'ունինք:

— Այո, այո, Տիկին Զապէլ Նսայեան՝ գրականութեան ամենաթանկագին աղամանդը, ինծի աղգական է, ամենասիրելի բարեկամս, Զիֆթէ ...

— Բայց կ'աղաչեմ ...

— Զիֆթէ-Սարաֆ սիրելի բարեկամս, Թարութիւնեան բարեկամս ...

— Լմնցուցէք:

— Շատ լաւ, շատ լաւ, մեր տունը կայ 12 հողի, երեք սենեակ, մէկ խոհանոց և ...

— Շնորհ ըրէք:

— Ասոնք ձգենք, նուաստս գրական ասպարէզը մշակել կը փափաքի:

— Վա՛յ, դժուար ալ խմբագիր պիտի ըլլաք:

— Այո՛, ո՛չ ...

— Ո՞րը:

— Խմբագիրացու աւելի ճիշդը ...

— Բայց անգամ մը մտածած է՞ք թէ անկուտի կ'ըլլաք:

— Պա՛հ, արդէն քանկուսի եմ:

— Աւուր հացի կարօտ կը մնաք կ'ըսեմ:

— Ես ատոնց ամէնը գիտեմ:

— Ուրե՛մն ...

— Ուրեմն, մուրհիմն աս է, ես որոշումս տուած եմ:

— Բայց վերջը պիտի զղջաք:

— Ես երբեք չեմ զղջար, վառն դի խումբագիրի վեհ՝ անուան տակ մինչեւ ցմահ հաց պիտի ունենամ, վստահ եմ.

— Ի՞նչպէս կ'ըլլայ կ'աղաչեմ բացատրեցէք:

— Խնդիրը շատ պարզ է, կարծեմ գիտէք Թավչանճեան-Ալիբարի խնդիրը, արդ ինչպէս որ Թավչանճեան էֆ. Ալիբարին պահանջը գոհացուց. լոկ անոր գրականութենէ ձեռքը քաշելուն համար, որովհետեւ շատ բաց կը գրէր, ես ալ պիտի ջանամ բաց գրելու մէջ Ալիբարը գերազանցել, որով Թավչանճեան էֆ. ստիպուի ինծի ալ ըսել, «Ինչ կ'ուզես գրիչդ ձգելու համար» և ես այն ատեն երբեք մտքէ չպիտի անցնեմ Իզմիրի կամ ուրիշ տեղի մը գանձանակը՝ այլ պիտի պահանջեմ վճարել՝ հացագործիս, մըսավաճառիս, նպարավաճառիս, դերձակիս, կօշկակարիս պարտքերը, տան վարձքը և գրիչս ձգելով պիտի սկսիմ գոց յօդուածներ գրել, որոնց համար ալ ստակ պիտի առնեմ Թավչանճեան էֆ.է, մէկ խօսքով մարդուն գլխուն 48 օխանոց գլխու փորձանք մը պիտի ըլլամ յանուն գրականութեան:

Վ.Ա.ՀՐԱՄ ԴՕՃԱԵԱՆ

ԻՆՉ ԿԸՍԷ ՏՆՕՐԷՆԸ

Ինչ որ կ'ըսէ ու պիտի ըսէ «Հանրագիտակ»-ի Տնօրէնը, կարծեմ ոչ նուազ ըսելիքներ ալ ունին այն Ազն. Տնօրէններն, որոնք թերթ մը կը վարեն այսօր:

Տնօրէնի մը ըսելիքները բեմական քարոզներ չեն կրնար ըլլալ, ոչ ալ վարժապետական խրատականներ: Տնօրէնին լեզուն՝ քսակըն է, միտքը բաժանորդները, և հոգին... քաւարանը:

Նորութիւն մը չէ կարծեմ ըսել թէ՛ ամէն թերթ իր ապառիկը ունի, ինչպէս ունին պախալ Թօման և խասապ Փօսթին: Ասիկա արտառոց կամ խելքէ դուրս բան մը չէ, հակառակ երեսուն և վեց բունթօ կանխիկի դրութեան, ճիշդ կարգ մը վաճառատուններու պէս, որոնցմէ երբ ներս մտնաս՝ Prix fixe աչքէդ ետք պէյնիդ կը զարնէ, և սակայն ներսը սակարկութեան մէջ քրտինք թափել կուտան:

Ահա նոյն բանն է նաեւ թերթերու համար, «բացարձակապէս կանխիկ է» կը պառնաք, ի ձայն փողոյ, սրինքի և զուռնայի, սակայն կրկին երբ մեր տետրակները աչքէ անցնէք, հոն կրնաք գտնել Համբարձում Պէննէեանի պէս եկնիվեսիւններ, որոնք երեք տարեկան պարտքի յետք մը ունին... սիւմիւլիւ պէժօճէյի պէս:

Բայց մեր ըսելիքը աս չէ:

Երբ օր մը ձենէ մէկը խմբագիր ըլլայ, և կամ եկած նամակները բանալու արստոնութեամբ Տնօրէն, մօտէն պիտի տեսնայ դաւաճական այն սրամիտ ու չքամիտ նամակագրութիւնները, զորս կարդալէ վերջ... դաւեշտագիր չըլլալը ընդոծին հիւանդութիւն մը և կամ ի ծնէ պակասութիւն մը ունենալ կը նշանակէ:

Այս անգամ պատիւ ունիմ ձեզ ներկայացընելու մէկ քանի դաւաճական նամակներ և կամ սխաթմ կեսանդրիկի նմոշներ, զորս կարդալով պիտի կրնաք գաղափար մը կազմել թէ, որպիսի դժուար բանէ Տնօրէն ըլլալը թերթի մը, ըլլայ օրական, ըլլայ շաբաթական:

Բայց սա ալ ըսեմ որ, կենցաղագլխու թիկնէ չի չեղելու համար, նամակներուն ոչ

տեղը ոչ ալ ստորագրութիւնը պիտի յայտնեմ: Ասով կը յուսամ թէ մեծ բարիք մը ըրած պիտի ըլլամ, նախ ինքզինքիս, յետոյ պաշտօնակիցներուս, որոնց մօտ դիտեմ թէ արցակներով կայ նմանօրինակ նամակներ, տարբեր ձեւերու տակ գրուած: Բարիք ըսի և կը հաստատեմ, յուսալով որ յետագայ տղերքը կարգացողները ալ չպիտի կրնան փորձել կրկին գրելով զմեզ ժամավաճառ ընելու ու մենք փրկուած կ'ըլլանք արդէն:

Ա. ՆՄՈՅՇ

Ազնուաւոր

Տնօրէն-խմբագիր «Հանրագիտակ» պաւսուական շաբաթաթերթին.

Տէր,

Ի վաղուց անցի կը փափախիմ Ձեր «Հանրագիտակ» շաբաթաթերթին բաժանորդագրուիլ: Բարեկամներես միոյն մօտ, որ բաժանորդ է ձեզի, տեսնելով նմոյք եւ շատ զոհ մնալով պարունակութեան, պիտի խնդրէի որ հանձնէի զիս բաժանորդ արձանագրել եւ շարունակել թերթերը կանոնաւորապէս մինչեւ տարւոյն վերջը, վստահելով որ երբ յառն երկու քիւերը ամբողջ ստանամ, եւ Աստուած ալ տալի մը զիս ողջ պահէ, պիտի կրնամ վճարել ձեր բաժնեգինը:

Ընդունեցէ՛ք Տէր...

Ստորագրութիւն

Արդ դուք Տնօրէն եղէք և այս անօրէն նամակին պատասխանելու քաջութիւնը ունեցէք: Մարդուկը թերթիս հաւանք է, կուզէ բաժանորդագրուիլ, յիտուն երկու թիւերը ամբողջ ստանալէ վերջ... եթէ Տէրը կամենայ, բաժնեգինը պիտի վճարէ 365 օր վերջ: Համո՛հ:

Բ. ՆՄՈՅՇ

Մեծապատիւ

խմբագիր Էֆէնի Հանրագիտակի, Հանեցէ՛ք Դեկտեմբեր մեկէն զիս բաժանորդ արձանագրել ձեր պաւսուական հանդէսին վեցամսեայ:

Թերթերը ուղղակի պիտի դրկեմ յետագայ հասցէին Օսմ. բօքսալով:

Կը փափաքեմ բաժնեգինը ձեզ հասցնել այս անգամ, բայց ձեր հասցէն ինձ անծանօթ ըլլալով՝ չի կրցի, ուրիշ առիւ կարելի է կ'ըրկեմ ձեզ դրամը:

Մնամ ձերդ...

Ստորագրութիւն

Այս ալ երկրորդ արտառոցութիւն մը և կամ գաւառական սրամտութիւն, որը որ կ'ուզէք:

Մարդուկը ուղղակի իմ հասցէիս նամակ կը գրէ, ամենայն ճշդութեամբ, և որ այդ հասցէով նամակը ձեռքս կ'անցնի, ու երբ դրամին կուգայ կարգը՝ խեղճ արարածը ասուեւ չը գիտնար, և թերթ կ'ուզէ . . . :

Գ. ՆՄՈՅԵ

Մեծայարգ

Խմբագիր-Տնօրէն Հանրագիտակ
ազգոգութեան շաբաթաթերթին .

Տէր ,

Ի սրէ կը փափաքիմ ունենալ Ձեր օրին հրատարակուած Հանրագիտակին ամբողջ քիւլերը: Այս առթիւ կը խնդրեմ որ հանրի առաջին քիւլէն ղրկել իմ հասցէիս հրատարակուած քիւլերը եւ շարունակել մինչեւ տարւոյն վերջը:

Այս փոստայով կուգէի ձեզ հասցնել տարեկան բաժնեգիրն փոստայի դրամաթուղթով, սակայն մոռցայ, ներողութիւն: Սրբ քերթերը ղրկեմ, դրամը կը հասցնեմ ձեզ:

Կանխաւ շնորհակալութիւն:

Ձերդ յարգանքով

Ստորագրութիւն

Տիպար խուռնագութիւն մ'ալ աս է, և կամ արիւար տխմարութիւն մը: Երանելին նամակը կը գրէ, և կը մոռնայ անոր մէջ ծրարել տարեկան բաժնեգիրը լրացնող յիշուս և չորս հատ դրոշմաթուղթերը, և ամենայն սրբութեամբ կըսէ թէ՝ «մոռցայ նամակիս մէջ դրոշմաթուղթ դնելու . . .»: Երբ տակաւին անվերջին վրայի ասուէսը անգամ չէ գրած և նամակը բաց է դեռ իր գրասենյակին վրայ, որ անշուշտ պախալի թէզիկահէն ալ վար բան մըն է իր սրամտութեան և կամ առաւփախաւութեանը պէս:

Գ. ՆՄՈՅԵ

Պատկառելի Տնօրէն ,
Հանրագիտակ հանդէսին ,

Մեծայարգ Տէր ,

Անցեալ օր տան մը մէջ դիպուածաւ տեսայ ձեր հանդէսը, քղբատեցի եւ շատ զուարճայի գտայ իր բովանդակութիւնը, ուստի, խնդրեմ, հանեցեմ զիս տարեկան բաժանորդ

արձանագրել եւ ըսել ինձ քե փոխարժեքը մանսալիոսով կ'ուզեմ որ ղրկեմ ձեր հասցէին քե ոչ դրամաթուղթով թահիւսչիւ նամակով մը:

Ապաստելով ձեր պատասխանին կը յուսամ քե կը ղրկեմ մինչեւ հիմա հրատարակուած քիւլերը առաջին նիւմեռօքն:

Ընդունեցեմ Տէր . . .

Ստորագրութիւն

Այս ալ ոչ նուազ խուռնագ մըն է ըստ ինքեան: Տխմարը իր խելապտուկին մէջ եւ փեր պատրաստեր է մեզ գետինը զարնելու և կամ խափելու նորահար սիւթէմ մը, և առանց անդրադառնալու թէ՝ մանտալիոսթ և թահիւսչիւ նամակով դրոշմաթուղթ, երկուքն ալ մի եւ նոյն բաներն են ու մեզ համար ընդունելի, կ'ըլլայ ինչդրել (°) աղաչել (°) պաղատել (°) և պէպէքի միամտութիւնը իբր դիմակ երեսը անցուցած հասկը՝ նալ կ'ուզէ թէ՝ ինչ միջոցով մեր ձեռքը հասցնէ դրամը (° . ° . °):

Դեռ կրնայի չորս հինգ էջ տեղ տալ այս նիւթին, թուելով մի առ մի օրինակելի օրինակներն ու նմոյշներն այս կարգի զրամտութեանց, բայց չորս հատը բաւական համարելով՝ կը վերջացնեմ ըսելիքս մէկ երկու պարզ դիտողութիւններով, ամէն անոնց հասցէին՝ որոնք գրած են և կամ միտք ունին գրելու նոյնատեսակ նամակներ:


1. — Թերթերու տնօրէններն ձեր կարծածին չափ միամիտներ չեն բարեկամներս, զանոնք խափել ուղեղը, սատանային դէմ աճալարարութիւն ընել կը նմանի:

2. — Սրամտութիւնը թերթերու մէջ փնտռեցէք, և ոչ թէ ձեր խելապտուկին:

3. — Փոխանակ շփացող գովեստներ չըռայելու և ահագին թերթ մը նամակ մտտելու, պարզ հասցէի մը կցեցէք վեցամսեայ կամ տարեկան բաժնեգիրը:

4. — Անգամ մ'ընդ միշտ պէտք է գիտնաք որ՝ մենք Պոլսեցիքս դարեջուր կը խըմենք, ոչ թէ . . . հոտ տեղի պէս քարի ջուր (Թաշ սույու):

Ա. Փ.



ԲԵՐԱ. — Անցեալ օր Բառէ վաճառատան մէջ քսակը կնիկէն աւելի սիրող քիչ շատ հարուստ ճանչցուած ամուսին մը հաւնուած գլխարկի մը առ թիւ այնքան տաք բանակուիւ մը ունեցեր է, որուն հետեւանօք ամօթ խած տիկինը անկողին ինկած է կըսուի: (Քուռչի կտորներու և խազի թիւ յերու ոսկիներ մսխող տիկիններուն բարի օրինակ. Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Սըլանտիտի աչքաբաց կառսօններէն կը խնդրուի, որպէս զի քիչ մը je m'enfichisteութիւնը ձգեն ու քաղաքավարութեամբ վարուին յաճախորդներուն հետ: (Կարծեմ թէ հաֆթալըխճի միւսիւններու իսկութիւնը հասկցած ըլլալին է որ կարեւորութիւն չտալ սկսած են. Ծ. Խ.):

ՍԿԻՒՏԱՐ. — Եկեղեցիներու մէջ վառարան դրուելու գաղափարը ջուրէն հանելու համար կարգ մը տեղացի տիկիններ որոշած են տարեկան մեշէ օտունին ապահովել բարեսիրական հանգանակութեամբ:

ՆՈՅՆ. — Գրպանի վեց հարիւր դրուչը ուրիշներու վեց հազար ցուցնելու համար քալուածքը, նստուածքը, խօսուածքը ըստ այնմ կեղծող պարոն մը վեց հարուր ոսկի դրամօժիտով աղջիկ կը փնտռէ եղեր : : : (Այդ տեսակ հապերը չեն կլլուիր կոր. Ծ. Խ.):

ՍԱՄԱԹԻԱ. — Անցեալ կերակի վեց անգամ նշանը ետ եղած օրիորդի մը շապիկը խորանին ետին դրուելու համար ժամկոչին աղաչող մայր մը, չի կրնալով իբր վարձք քառասուն փա-

րայ վճարել, բախթի ձեռին ետ դարձած պահուն ճարպիկ մէկը յափշտակելով կծիկը դրեր է: (Հիմա աղջիկդ կարգեցիր տուտու. Ծ. Խ.):

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Միլիոն անգամ կրկնած ենք՝ դարձեալ այդ հարկին մէջ կը գտնուինք խնդրելու մեր յօդուածագիրներէն թէ, բանաստեղծութիւն, ոտանաւոր, իր սեկն (.) Սքիննոզա, Ֆիլոսոֆա, սերչե, կոյս, բոյս, չայիր, չիմեկ չենք կրնար ընդունիլ մեր թերթին մէջ, այդ կարգի գրուածքներուն համար ալ պարբերականներ ունինք, մենք կը հրատարակենք այն գրութիւնները միայն՝ որոնք գոնէ կարդացողին մէկ ակռան ցոյց տալու չափ փօմիփ տարր մը ունին իրենց մէջ:

ՄՏՔԻ ԶԲՕՍԱՆՔ

ՊԱՐԳԵՒԱՒՈՐ

Ա Գ Ն Թ Ի Ը Է :

Այն պարբերութիւնը ճիշդ կարդացողին պիտի նուիրենք սիրուն թղթապանակ մը, առնուազն կէս Օսմ. Ոսկինոց:

Լուծումները պէտք է ղրկուին մինչև Զորեքշաբթի առաւօտ, որոնց մէջէն վիճակաւ պիտի շահի լուծողը:

Ursofiuskr ԱՐՄԻՆ ԼՈՌԻՍԵՆԱՆ

ՅՊԱՂՐ. Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի հասեփի քիւ 52.

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՊԵՐՁԵԱԾՆԱՅ

Արակ, Կանակ և Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ


Գ. ԷՐՄԷՆԵԱՆ և Ընկ.

Կ. Պոլիս, Սուլթան Համալ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տոկոսութեամբ և գիներու անմրցելի աժանութեամբը շահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հազուատներու, կանանց բեղրիկներու և տղայոց շիք և գիմացկուն փոքրիկներու ճոխ միջերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հազուատի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ. է:

Դաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին: 50—22



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՅԷ՛Ք

ՓՈՒԹԱՅԷ՛Ք ԳՆԵԼ

Կ. ԵՍՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղալ պէյ խանին
սակ

Թէ յի մեծ վաճառատան թէյերը, որք ուղղակի ներածուելով Սեյլանէ, Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ և Ճաւոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըրնան գոհանալ թէյերու թարմութեամբ, հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յատուկ խառնուրդները, որք կը ծախուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մատչային:

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը վաճառէ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ Եւնի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաեւ ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօաֆիէներ, ամերիկեան կօշիկներ ։ Ունի նաեւ կահկարասի, ձեղունի լամպարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, դետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու սիւռիկիթներ՝ ամենավերջին կատարելութիւններով ։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ չահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկոսնութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար ։

Ա. Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ դնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հալթայթել ։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՁՈՋ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ աճախորդները ։

Կանխիկ դնողներու համար հարիւրին 5 զեղջ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-11

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են ։